ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-3Բ

ք. Երևան <<03>> 02. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի ռեկտոր՝ Դ. Գալոյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.4.1.02.բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ի անվճար համակարգում ընդգրկված միջին տարեկան՝ 508 ուսանողի, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսուցում, որի դիմաց Պատվիրատուն պարտավորվում է ուսանողական նպաստների ձևով իրականացնել ուսման վարձի փոխհատուցում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1.Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է՝ 324 136 000 (երեք հարյուր քսանչորս միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ, որը ներառում է անվճար համակարգի ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 267 909 500 (երկու հարյուր վաթսունյոթ միլիոն ինը հարյուր ինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 27 953 000 (քսանյոթ միլիոն ինը հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 28 273 500 (քսանութ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան >> ՊՈԱԿ
Կառավարական 2 շենք	ք. Երևան, Նալբանդյան 128
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
2900011034130	Հ/Հ 900018001876
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Ռեկտոր՝
---------- Ն.Հարությունյան	---------- Դ. Գալոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)